ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 մայիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

62
(2728)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՐՃԱՏՄԱՆ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ 2022 թվականի հոկտեմբերի 13-ի դրությամբ ՀՀ մշտական բնակչության թիվը կազմել է 2 մլն 928 հազար 914 մարդ, իսկ նույն ժամանակահատվածում առկա բնակչության թիվը կազմել է 2 մլն 638 հազար 917: Ըստ Վիճակագրական կոմիտեի՝ մշտական բնակչության թվաքանակում ներառված է ՀՀ-ում մշտապես բնակվող ու հաշվառման պահին ներկա եւ ժամանակավոր բացակա բնակչության թվաքանակների ցուցանիշների հանրագումարը: Համեմատելու համար նշենք, որ նախորդ մարդահամարն անցկացվել էր 2011 թվականին: Այդ տարվա տվյալներով՝ ՀՀ մշտական բնակչության թիվը կազմել էր 3 մլն 18 հազար 854 մարդ, իսկ առկա բնակչությունը՝ 2 մլն 871 հազար 771 մարդ: Եթե արտահայտենք թվերով, ապա մշտական բնակչությունը 11 տարում կրճատվել է շուրջ 89 հազար 940-ով:

Արդեն այսօրվանից խորհրդարանը վերսկսում է իր աշխատանքը: Մեկնարկում են ԱԺ 5-րդ նստաշրջանի հերթական նիստերը: Այս շաբաթ խորհրդարան է գնալու ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը՝ ներկայացնելու դատախազության 2022թ.-ի գործունեության մասին հաղորդումը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ դատախազի՝ ԱԺ գալուն ընդառաջ՝ շատ ՔՊ-ականներ փորձում են Վարդապետյանի հետ հարաբերություն կառուցել կամ վերականգնել, քանի որ նախկինում, երբ Վարդապետյանը աշխատում էր արդարադատության փոխնախարար եւ անարդար ձեւով հեռացվեց պաշտոնից, շատ ՔՊ-ականներ անգամ չէին բարեւում նրան: Հիմա վախենում են, որ Վարդապետյանը գուցե «վրեժ լուծի» իրենցից, քանի որ շատերի ունեցվածքը շեշտակի չհիմնավորված ավելացել է: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ՔՊ-ականները տարբեր առիթներ են փնտրում գլխավոր դատախազի հետ հանդիպելու համար, սակայն Վարդապետյանը հիմնականում խուսափում է ՔՊ-ականների հետ շփումներից: Նա ուղիղ շփման մեջ է միայն Նիկոլ Փաշինյանի հետ եւ ԱԺ գնալիս Վլադիմիր Վարդանյանի հետ է շփվում, ընդմիջում է անում ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի սենյակում:



Հշխանական էլիտան կիրակի օրը խնջույքի է եղել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ական վերնախավը՝ նախարարները եւ պատգամավորները, Փաշինյանի գլխավորությամբ, մասնակցել են ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանի որդու հարսանիքին: Մեր տեղեկություններով՝ Փաշինյանն ընտանիքի հետ է մասնակցել միջոցառմանը: Հովակիմյանն անձամբ է զանգահարել եւ կուսակից ընկերներին հարսանիք հրավիրել՝ մոռանալով, որ ինքը անկախ մարմնի ղեկավար է եւ պետք է քաղաքական չեզոքություն պահպանի: ՔՊ-ական մեր աղբյուրների փոխանցմամբ՝ հարսանիքը բավականին ճոխ է նշվել, ՔՊ-ականներն էլ լավ քեֆ են արել, ուրախացել, ինչպես հայտնի հեքիաթում՝ աշխարհը խալի է ոտի տակ... Տեղեկացանք, որ Հովակիմյանի որդու հարսանիքը եղել է «Լիաննա» ռեստորանային համալիրում, որի սեփականատերը ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանի ընտանիքն է:

Իրավապահ մարմինները ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակիցների գործունեության մեջ բացահայտումներ կանեն. «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ սպասվում են ձերբակալություններ: Այդ բացահայտումները կապված են ՀՀ ՊՆ պաշտոնատար անձանց կողմից զինվորների օգտին կլորիկ գումարի դիմաց ինչ-ինչ ծառայություն մատուցելու դեպքերի հետ: Հիշեցնենք, որ ապրիլի 21-ին կաշառք ստանալու, տալու եւ կաշառքի միջնորդության դեպքերով կալանավորվել էին ՊՆ զորամասի հրամանատարի տեղակալն ու եւս երեք անձ. ավելի ուշ՝ ապրիլի 26-ին, կալանավորվել էր Երեւանի կայազորի հոսպիտալի պետը:

ՊԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆ Է

ԱՅՍ ԻՐԱՎԻՃԱԿՆ ԱՆՎԵՐՋ Է

«Ժողովուրդը» օրաթերթը Արցախում տեղի ունեցող զարգացումների շուրջ զրուցել է խորհրդարանի նախկին փոխնախագահ, ՀՀ նախկին արտակարգ եւ լիազոր դեսպան Արա Սահակյանի հետ:

-Պարոն Սահակյան, կիրակի օրը ադրբեջանցիները հերթական սադրանքն են իրականացրել Արցախում՝ փակելով Գորիսից վերադարձող արցախցիների ճանապարհը. կանգնեցրել են նրանց, անձնագրերը ստուգել, ավելին՝ ծաղրել են նրանց, տեսանկարահանել, ինչից հետո նոր թույլ են տվել, որ վերադառնան իրենց բնակավայրերը: Ի՞նչ գնահատական կտաք այս իրավիճակին:

-Այս իրավիճակն անվերջ է լինելու: Նրանք, ովքեր հայ-ադրբեջանական կամ հայ-թուրքական մերձեցումը վարդագույն են ներկայացնում, սխալվում են: Այս օրինակները մեզ հուշում են, որ Թուրքիան եւ Ադրբեջանը հատուկ հետաքրքրվածություն չունեն Հայաստանի շահերի համար ինչ-որ բարենպաստ քայլեր անելու համար. այսօր Ադրբեջանի առաջին խնդիրը որքան հնարավոր է Հայաստանից շատ տարածքներ կորզելն է եւ ընկճված հոգեվիճակի մեջ դնել հասարակությանը, բայց Ադրբեջանի եւ Թուրքիայի քայլերն այնքան չեն ընկճում մեր ժողովրդին, հատկապես՝ արցախցիներին, որքան մեր իշխանությունները: Երբ ժողովրդի մեջքը կոտրողը սեփական իշխանությունն է, միայն ապստամբությունը կարող է դա կոտրել: Մեր իշխանություններն այնպիսի իրավիճակի են հասցրել, որ իրենց տուն վերադառնալու համար արցախցիները պետք է Ադրբեջանի թույլտվությունը ստանան: Այս ամենը 2020թ-ի պատերազմում մեր պարտության հետեւանքն է, իսկ պատերազմն էլ 2018թ-ի կեղծ հեղափոխության հետեւանքն էր. այսպիսի շրջապտույտի մեջ ենք հայտնվել:

-Ձեզ համար հասկանալի՞ է ռուսական կողմի վարած քաղաքականությունը. ի վերջո, պատերազմից հետո իրենք են պատասխանատվություն ստանձնել Լաչինի համար, որտեղ օրեր առաջ ադրբեջանցիները հերթական անցակետն են տեղադրել:

-Ոչ միշտ, բայց ես իմ առջեւ խնդիր էլ չեմ դրել նրանց վարած քաղաքականությունը հասկանալու: Ռուսաստանի ասածներն ու արածները հասկանալու համար պետք է նախ ունենաս պատասխանատու իշխանություն, որն ամենօրյա ռեժիմով կաշխատի ռուսական կողմի հետ: Ռուսաստանի վարած քաղաքականության պատճառների մի մասը պետք է փնտրել մեր վարքագծի մեջ: Պարզ է, որ դաշնակիցները պատասխանատվություն ունեն. կան միջազգային փաստաթղթեր, որոնք որոշակի պարտավորություններ են դնում կողմերի վրա: Այս ամենը հասկանալի է, բայց վանել, այն, ինչ կատարվում է Արցախում, ասել՝ ռուսնե՛ր, դուք արե՛ք, բերում է հենց այս իրավիճակին: Ստացվում է՝ մենք հիմա ունենք մի իշխանություն, որը գիտի, թե ինչ իրավունքներ ունի ինքը, բայց չգիտի, որ պարտավոր է թույլ չտալ տարածքային կորուստներ: Նման լպիրշ, անհոգ, ցինիկ վերաբերմունքն անընդունելի է: Պետությունը եւ տարածքը մեկ ամբողջություն են. ասել, թե տարածքի այս կամ այն մասը մեզ համար այդքան էլ գրավիչ չէ կամ դժգույն է, անընդունելի է: Մենք մարդկության պատմության մեջ կլինենք դեռեւս գոյություն ունեցող այն ժողովուրդներից մեկը, որը հանդուրժում է նման իշխանություններին. որեւէ ժողովուրդ չէր հանդուրժի:

-Պարոն Սահակյան, այս իրավիճակում նախադրյալներ տեսնու՞մ եք Արցախի ինքնորոշման իրավունքի հարցը միջազգային հարթակում բարձրացնելու համար:

-Այո, տեսնում եմ: Չնայած իրավիճակը հուսահատեցնող է, բայց դրա համար քաղաքական կամք պետք է դրսեւորվի, իսկ իշխող քաղաքական խումբը չի դրսեւորում այդ կամքը: Ճիշտ կլինի՝ կամովին հրաժարվեն կամ իրենց տեղը զիջեն երիտասարդ սերնդին: Պետք է վերականգնել հասարակական համերաշխությունը, եւ ամեն ինչ էլ հնարավոր կլինի: Իշխանությունը ինչ-որ բան է զիջում, ժողովուրդը մի փոքր ցնցում է ապրում, հետո սկսում է իր քայլերը կառուցել՝ արդեն ելնելով այդ զիջումից, ասում է՝դե, գիտեք, սա այսպես եղավ, ուրեմն մենք պետք է համակերպվենք այս իրավիճակի հետ, հետո նոր զիջում է լինում. սա է իրավիճակը:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ ԵՆ

ԹԱԳՈՒՀԻ ԹՈՎՄԱՍՅԱՆԸ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ Է ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Ջերմ ու մտերմիկ զրույց կվերնագրեի Հարավային Կովկասի հետ հարաբերությունների հարցերով պատվիրակության ղեկավար Մարինա Կալյուրանդի հետ իմ ու ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի աշխատակիցների հանդիպումը:

Ներկայացրի խաղաղության ձգտող Հայաստանին շարունակ պատուհասող սպառնալիքները: Նշեցի, որ ՀՀ սուվերեն տարածքը փոքրանում է 2020թ. արցախյան պատերազմից հետո, սակայն միջազգային հանրությունը միայն մտահոգված հայտարարություններ է անում, որոնցով մեր հայրենիքը եւ մեր քաղաքացիներին չենք օգնում:

Ընդգծեցի, որ Արցախն արդեն 138 օր է՝ լիակատար շրջափակված է, եւ չնայած Լաչինի միջանցքի վերաբերյալ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի վճռին՝ ճանապարհը մնում է փակ:

Տիկին Մարինա Կալյուրանդը դատապարտեց Ադրբեջանի գործողությունները, որով խաղաղության գործընթացը վտանգվում է: Նա իր գործընկերների հետ հայտարարություն էր տարածել Լաչինի միջանցքի վերաբերյալ՝ կոչ անելով Բաքվին հանձն առնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորումը եւ հարգել միջազգային պարտավորություններն ու նորմերը: Խոսեցի Հայաստանում անվտանգային իրադրության սրման ու դրա հետեւանքների մասին՝ի թիվս այլնի հիշատակելով Սոթքի ուղղությամբ ադրբեջանցիների կրակոցները, որոնց հետեւանքով Սոթքի 800 աշխատակիցներ 1 շաբաթից ավել հարկադիր պարապուրդի մեջ են հայտնվել: Շոշափեցինք բոլոր կարեւորագույն թեմաները, որոնց մասով ԱԺ ՄԻՊՀՀ հանձնաժողովի մեր թիմը պարբերաբար զեկույցներ է պատրաստում, ուղարկում միջազգային բոլոր գործընկերներին»:

ՔՆՆԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՍՊԱՍՈՒՄ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով ստեղծված քննիչ հանձնաժողովը սպասում է Արցախի նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանի պատասխանին, որպեսզի կարողանա հանձնաժողովի նիստ հրավիրել, լսել նախկին պաշտոնյային: Ասել է թե՝Ջալալ Հարությունյանը խոստացել է հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանին ներկայանալ քննիչ հանձնաժողով, բայց օրն ու ժամը պետք է իրեն հարմարեցնի: ԱԺ պաշտպանության հանձնաժողովը սպասում է Ջալալ Հարությունյանի պատասխանին: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողով է հրավիրվելու ՊԲ նախկին հրամանատար Ջալալ Հարությունյանը: Առաջիկայում այս շարքը շարունակվելու է, եւ նոր հրավիրվողներ էլ կլինեն: Բանն այն է, որ քննիչ հանձնաժողովի գործունեությանը քիչ ժամանակ է մնացել, եւ պետք է արագացնել աշխատանքները: ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Քոչարյանը, որ նաեւ հանդիսանում է «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով» ստեղծված ԱԺ քննիչ հանձնաժողովի նախագահը, առաջարկում է եւս մեկ անգամ երկարաձգել այդ հանձնաժողովի գործունեությունը: Համապատասխան նախագիծն արդեն դրվել է շրջանառության մեջ, կքննարկվի այսօր մեկնարկելիք ԱԺ նստաշրջանում: Մասնավորապես, նա առաջարկում է հանձնաժողովի գործունեության ժամկետը երկարաձգել եւս վեց ամսով: Որպես հիմնավորում՝նշվում է. «Ազգային ժողովի քննիչ հանձնաժողովը տարբեր գերատեսչություններից պահանջել եւ ստացել է բազմաքանակ փաստաթղթեր, որոնք մանրամասն ուսումնասիրելուց հետո անցել է հրավիրյալներին լսելու փուլին», այսինքն՝ վեց ամիս է մնացել հանձնաժողովի վերջնական արդյունքների համար: Հիշեցնենք, որ միայն ՔՊականներից կազմված այդ հանձնաժողովի իրական նպատակը պատերազմի հնարավոր հանգամանքները Նիկոլ Փաշինյանի վրայից մաքրելն է:

Ի՞ՆՉ ՍՊԱՍԵԼ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ

Արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը Միացյալ Նահանգներում կիանդիպի Ադրբեջանի արտգործնախարար Ջեյհուն Բայրամովին: Երեւանն ու Բաքուն այլ մանրամասներ չեն հաղորդել:

Մինչ այդ ադրբեջանական «Թուրան» գործակալությունը, հղում անելով ԱՄՆ-ում իր դիվանագիտական աղբյուրներին, հայտնել էր, որ Վաշինգտոնը փորձելու է հասնել տարաձայնությունների հաղթահարմանն ու խաղաղության «ճանապարհային քարտեզի» մշակմանը: Անգամ նշվել էր, որ Միրզոյանի եւ Բայրամովի հանդիպումը կարող է տեւել «մի քանի օր»:

Միրզոյանի ու Բայրամովի նախորդ հանդիպումը նոյեմբերի 7-ին էր, դարձյալ՝ Վաշինգտոնում:

Օրեր առաջ ՌԴ արտգործնախարարության խոսնակ Մարիա Զախարովան հայտարարել էր, որ կա համաձայնություն Ռուսաստանում անցկացնել Միրզոյան-Լավրով-Բայրամով եռակողմ հանդիպում: Հայաստանի արտգործնախարարությունն արձագանքել էր, որ «կան հանդիպումների առաջարկներ, հիմա նաեւ՝ պայմանավորվածություններ», բայց հանդիպման ամսաթիվը կհաղորդվի լրացուցիչ:

Հայաստանի արտգործնախարարը հրաժարվել էր անցած դեկտեմբերին Մոսկվայում նախատեսված եռակողմ հանդիպումից:

ԱԺ 5–ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԻՍՏ

Այսօր՝ մայիսի 2-ին, խորհրդարանը կվերսկսի իր աշխատանքը: Կմեկնարկեն ԱԺ 5-րդ նստաշրջանի հերթական նիստերը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ ԱԺ մեկնարկելիք նստաշրջանի օրակարգում 16 հարց է ընգրկված:

Նախատեսվում է, որ այս շաբաթ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը եւս կգա խորհրդարան՝ ներկայացնելու դատախազության 2022թ.-ի գործունեության մասին հաղորդումը:

Պատմել է համայնքապետը

Ապրիլի 23-ից Ադրբեջանն ապօրինի անցակետ է տեղադրել Արցախ-Հայաստան սահմանագծին՝ Լաչինի միջանցքում, ինչի հետեւանքով Շուշիի շրջանի համայնքները մնացել են լիակատար շրջափակման մեջ՝ կտրվելով ինչպես Ստեփանակերտից, այնպես էլ ՀՀ-ից:

Շուշիի շրջանի չորս համայնքների բնակիչները, որոնք անցակետի տեղադրման պատճառով մնացել էին Գորիսում, երեկ ռուս խաղաղապահների աջակցությամբ փորձել են վերադառնալ իրենց բնակավայրեր, սակայն ադրբեջանցիները Լաչինի միջանցքում կանգնեցրել են նրանց:

ArmLur.am-ի հետ զրույցում Շուշիի շրջանի Մեծ Շենի համայնքապետ Դավիթ Դավթյանը պատմում է՝ ադրբեջանցիները կանգնեցրել են Գորիսից Արցախ վերադարձող արցախցիներին, տեսանկարահանել նրանց, ստուգել նրանց անձնագրերը, նաեւ ծաղրի են ենթարկել նրանց, հարցրել են՝ Խանքենդի՞ եք գնում: «Ռուսն էլի խաբել է, ասել է՝ իրենք են ստուգելու, ադրբեջանցիները չեն ստուգելու, մարդիկ գնացել են, պարզվել է՝ ադրբեջանցին է ստուգում »,-ասում է Դավթյանը:

ՏԵՍԱՆԿԱՐԱՀԱՆՈՒՄ

ՍՏԻՊԵԼ ԵՆ ԿԱՏԱՐԵԼ ԻՐԵՆՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2023 թվականի ապրիլի 23-ից Ադրբեջանը ապօրինի անցակետ է տեղադրել Արցախ-Հայաստան սահմանագծին (Լաչինի միջանցքում), որի հետեւանքով Արցախի Հանրապետության Շուշիի շրջանի համայնքները մնացել են լիակատար շրջափակման մեջ՝ կտրվելով ինչպես Ստեփանակերտից, այնպես էլ ՀՀ-ից: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում գրել է Արցախի Հանրապետության պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը:

«Ապրիլի 23-ից Շուշիի շրջանի Մեծ Շեն, Հին Շեն, Եղցահող եւ Լիսագոր համայնքների բնակիչների հումանիտար վիճակն օր-օրի վատթարացել է, փորձ է արվել Կարմիր խաչի արցախյան գրասենյակի միջոցով այդ համայնքներին սնունդ եւ դեղորայք մատակարարել, սակայն այդ ջանքերը արդյունք չեն տվել: Ռուս խաղաղապահների աջակցությամբ սկզբնական օրերին ծնողների մոտ են վերադարձվել Գորիս քաղաքում մնացած երեք անչափահաս երեխաները, իսկ մնացածների վերադարձն Ադրբեջանը արգելել էր:

Լիակատար ու երկկողմանի շրջափակման մեջ գտնվող գյուղերի բնակիչների հրատապ հումանիտար խնդիրները լուծելու համար մի խումբ բնակիչներ դիմել են տեղում ծառայություն իրականացնող ռուս խաղաղապահներին, որոնց կողմից թույլատրվել է առանց զննության մասնավոր մեքենաներով անցնել Հակարիի կամրջի մոտ տեղադրված անցակետով՝ նախապես հավաստիացնելով, որ ադրբեջանցիների կողմից որեւէ հսկողական միջամտություն չի լինելու: Մեր քաղաքացիները խաղաղապահների աջակցությամբ միակողմանի ու անխափան կերպով անցել են ճանապարհը, սակայն անցակետի տեղադրման պատճառով Գորիսում մնացած հայրենակիցների հետ իրենց բնակավայր վերադարձի ճանապարհին անցակետում նրանք հանդիպել են ադրբեջանցիների: Վերջիններս, մեր քաղաքացիներին դնելով անելանելի վիճակում, ստիպել են կատարել իրենց պահանջները, տեսանկարահանել այդ գործընթացը հերթական բեմականացումը ցուցադրելու համար:

Սա հերթական ապացույցն է, որ ադրբեջանական ապօրինի անցակետը խոչընդոտում է Արցախի քաղաքացիների, մեքենաների ու բեռների անխափան տեղաշարժը՝ խախտելով 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթները եւ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի որոշումը: Արցախի Հանրապետության ժողովուրդը սպասում է Լաչինի միջանցքի՝ եռակողմ հայտարարությամբ սահմանված ռեժիմի վերականգնմանը՝ 5 կմ լայնությամբ միջանցք՝ բացառապես ռուսական խաղաղապահ ուժերի վերահսկողությամբ»,- գրել է նա:

Արձագանքելով ադրբեջանցիների տարածած այն տեսանյութին, որում տեսանելի է, թե ինչպես են արցախցիները Հակարի գետի վրա տեղակայված ադրբեջանական հսկիչ անցագրային կետն անցնում՝ անձնագրային ստուգմամբ եւ մեքենայի զննությամբ, Արցախի պետնախարարը նշել է, թե ՀՀ-ից «իրենց բնակավայր վերադարձի ճանապարհին անցակետում նրանք հանդիպել են ադրբեջանցիների. վերջիններս, մեր քաղաքացիներին դնելով անելանելի վիճակում, ստիպել են կատարել իրենց պահանջները, տեսանկարահանել այդ գործընթացը հերթական բեմականացումը ցուցադրելու համար»:

Facebook-ի իր էջում ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանը գրել է. «Միանգամից ասեմ, որ պետնախարարի այս մեկնաբանությունը համոզիչ չէ հենց միայն այն տեսանկյունից, որովհետեւ մեկ շաբաթ է՝ մամուլում, սոցիալական ցանցերում հազարավոր նյութեր, տեսանյութեր եւ ֆոտոշարքեր էր շրջանառվում ադրբեջանցիների տեղակայած անօրինական անցակետի վերաբերյալ, եւ դժվար թե այդ հատվածով երթեւեկած քաղաքացիները նախապես դրա մասին չիմանային:

Եվ ամենակարեւորը՝ ՀՀ-ից Արցախ մուտք գործելիս՝ մինչեւ ադրբեջանական անցակետ, ծառայություն են կրում արցախցի ոստիկանները, հարակից հատվածներում, սահմանագծի պահպանությամբ ծառայություն են կրում ՀՀ սահմանապահ զորքերը, որոնք, բնականաբար, տեղյակ էին իրավիճակից:

Այս ամենը ցույց է տալիս, որ խնդիրը ոչ թե ադրբեջանական ծուղակում հայտնված արցախցիներն են, այլ Արցախի իշխանությունները, առանց որոնց թույլտվությամբ կամ համաձայնությամբ բացառված է Արցախի կամ Հայաստանի գրանցում ունեցող անձանց անցումը դեպի Արցախ կամ միջանցքի այն հատված, որտեղ տեղակայված է ադրբեջանական անցակետը:

Արցախի իշխանությունը, իսկ այս դեպքում կոնկրետ պատասխանատուն՝ նախագահը, պետք է պարզաբանեն, թե ինչ պայմանավորվածության, ինչ քաղաքական որոշման հետեւանքով է տեղի ունեցել այս գործընթացը, որովհետեւ սա խաղաթուղթ է դառնալու ադրբեջանցիների համար՝ միջազգային հարթակներում «հիմնավորելու», որ միջանցքը, իբր, բաց է, շրջափակում չկա, իսկ արցախցիները պատրաստ են ապրել ադրբեջանական օրենքների շրջանակներում»:

ԼՈՒՐԵՐ

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՀԵՌԱԽՈՍԱՔՐՈՒՅՑՈՎ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինկենը կիրակի՝ ապրիլի 30-ին, հեռախոսազրույց է ունեցել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Այս մասին հայտնում է ԱՄՆ Պետդեպարտամենտի մամուլի խոսնակ Մեթյու Միլլերը:

Ինչպես նշված է Պետդեպի պաշտոնական կայքում հրապարակված հաղորդագրության մեջ, Ալիեւի հետ զրույցում Բլինկենն ընդգծել է հայ-ադրբեջանական խաղաղ բանակցությունների կարեւորությունը եւ խոստացել ԱՄՆ-ի շարունակական աջակցությունը:

«Պետքարտուղար Բլինկենը համոզմունք է հայտնել, որ հնարավոր է խաղաղության հասնել: Նա նաեւ Միացյալ Նահանգների խորը մտահոգությունն է հայտնել Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքում անցակետի տեղակայման կապակցությամբ՝ նշելով, որ այն խաթարում է խաղաղ գործընթացում վստահության ամրապնդմանն ուղղված ջանքերը, եւ ընդգծել Լաչինի միջանցքը հնարավորինս շուտ բացելու կարեւորությունը»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՄԻՋԱԴԵՊ՝ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանի պետական անվտանգության ծառայության (ՊԱԾ) փոխանցմամբ՝ ապրիլի 30-ին Քարելիի մունիցիպալիտետի Դվանի գյուղի մոտ ռուսական ուժերի ներկայացուցիչները ձերբակալել են Վրաստանի երկու քաղաքացու:

«Ալիք»-ը հայտնում է, որ տեղաբնակները հայտնել են՝ երկու քաղաքացիներն էլ ձերբակալման պահին անասուններ արածեցնելիս են եղել:

«Պետական անվտանգության ծառայությունը, նշված միջադեպի մասին տեղեկությունը ստանալով, ակտիվացրել է ԵՄ դիտորդական առաքելության կողմից գործարկվող թեժ գիծը: Միջադեպի մասին անմիջապես տեղեկացվել են միջազգային գործընկերները եւ Ժնեւի միջազգային քննարկումների համանախագահները:

Գործարկվել են բոլոր գործող մեխանիզմները՝ ապօրինի բերման ենթարկված անձանց հնարավորինս սեղմ ժամկետներում ազատ արձակելու համար»,- նշված է ՊԱԾ-ի տարածած հաղորդագրության մեջ:

ՈՐՈՇՈՒՄ

«ԱՆՈՐՄԱԼԻ» ՎԱՐՈՐԴԻ ԳՈՐԾԸ՝ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

2023. փետրվարի 11-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ճնչական առաջին բաժին հաղորդում էր ստացվել այն մասին, որ փետրվարի 10-ին՝ ժամը 23:30-ի սահմաններում, Հանրապետության հրապարակում Պարեկային ծառայության ծառայողներին է մոտեցել «Համմեր» մակնիշի ավտոմեքենա, որի վարորդը մեքենան լիցքավորելու համար գումար է պահանջել պարեկներից:

Մերժում ստանալուց հետո, բացահայտ անհարգալից վերաբերմունք դրսեւորելով հասարակության նկատմամբ, նա մեքենան վարել է Աբովյան փողոցով՝ երթեւեկությանը հանդիպակաց, չի ենթարկվել ոստիկանության ծառայողների՝ «կանգ առ» ազդանշանին, մեքենան շարունակել է վարել Արամի, Փ. Բյուզանդի, Վ. Սարգսյանի, Ագանթագեղոսի, Տիգրան Մեծի, Ամիրյան փողոցներով, այդ թվում՝ հետիոտնի համար նախատեսված վայրով՝ դիտավորյալ վնասելով փողոցներում կայանված թվով 8 քաղաքացիական մեքենաներ:

Այնուհետեւ նա երեւկել է ՀՀ կառավարության վարչական շենքի հանդիպակաց ոչ երթեւեկելի հատվածով, որտեղ, շարունակելով չենթարկվել պարեկային ծառայության օրինական պանաջին, վրաերթի է ենթարկել Պարեկային ծառայության աշխատակցին, դիտավորյալ վնասել Պարեկային ծառայության թվով 3 ավտոմեքենա:

Այդ գործողությունները կանխելու համար պարեկային ծառայողներն իրենց ամրակցված ատրճանակներով մոտ տարածությունից մի քանի անգամ կրակել են վերոհիշյալ ավտոմեքենայի անվադողերի ուղղությամբ՝ փորձելով կանգնեցնել այն, սակայն վարորդը շարունակել է երթեւեկությունը, խույս տալով պարեկներից՝ մեքենան թողել է Երեւան քաղաքի Ագաթանգեղոս 7-րդ շենքի կամարանցման տակ եւ դիմել փախուստի:

Վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ «Համմեր» մակնիշի ավտոմեքենան պատկանում է Արարատի մարզի բնակիչ Գեղամ Ս.-Ն-ին, որը եղել է ենթադրաբար թմրանյութի ազդեցության տակ: Պարզվել էր, որ տեղյակ լինելով որդու թմրամոլ լինելու մասին՝ հայրն ավտոմեքենայի բանալիները թաքցրել է նրանից, սակայն երիտասարդը փնտրել ու գտել է ավտոմեքենայի պահեստային բանալին, որից հետո ավտոմեքենայով մարզից եկել է Երեւան քաղաք: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նախաքննական մարմինը դիմել է միջնորդությամբ նրա կալանքը երկարացնելու համար, ինչը բավարարվել է. նա կշարունակի մնալ երկամսյա կալանքի տակ եւ գտնվում է քրեակատարողական հիմնարկում: Նախաքննությունը շարունակվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՄ

ԼՈՒՐԵՐ

33 ՏԱՐԻ ԿՈՄԱՅԻՑ ՀԵՏՈ

Մահացել է 33 տարի կոմայում գտնված նյույորքցի ոստիկանը. գրել է New York Post-ը՝ հղում կատարելով իրավապահ մարմինների աղբյուրներին: Թրոյ Փատերսոնը 1990թ. ենթարկվել էր երեք զինված հանցագործների հարձակմանը, որոնք կրակել էին նրա գլխին՝ փորձելով խլել 20 դոլար: «Հերոս ոստիկանը, որը լվանում էր իր մեքենան տնից երեք թաղամաս այն կողմ, մինչեւ իր մահը՝ շաբաթ գիշեր, վեգետատիվ վիճակում էր»,- նշվել է հրապարակման մեջ: Հարձակման պահին Փատերսոնը 27 տարեկան էր, որոնցից վեցը ծառայել էր ոստիկանությունում՝ արժանանալով յոթ շնորհակալագրի մասնագիտական գործունեության համար: Արդեն հիվանդանոցում նրան շնորհվել է դետեկտիվի կոչում:

ՀԲԱԺԱՐՎԵԼ Է ԵԲԲՈՐԴ ԲՈՒԺՈՂ ԲԺՇԿԻՑ

«Վիվամեդ» կլինիկայի տնօրեն Ջուրաբ Չխաիձեն հայտարարել է, որ Վրաստանի երրորդ նախագահ, այժմ անազատության մեջ գտնվող Միխեիլ Սաակաշվիլին հրաժարվել է նաեւ երրորդ բուժող բժշկից. այս մասին հայտնում է «Ալիք մեդիա»-ն:

Չխաիձեն ասել է, որ բժիշկների համար ամեն օր ավելի ու ավելի է դժվարանում աշխատել Սաակաշվիլիի հետ, քանի որ բժիշկները հիմնականում ստիպված են աշխատել հոգեբանական մեծ ճնշման տակ:

Նրա խոսքով՝ կլինիկական առաջընթացի առումով Սաակաշվիլիի մոտ այս օրերին փոփոխություն չկա:

«Ինչ վերաբերում է կրիտիկական վիճակին, ուզում եմ ասել, որ ծանր վիճակում գտնվող հիվանդները բժշկին չեն ընտրում: Միխեիլ Սահակաշվիլիի առողջական վիճակի կլինիկական ընթացքն իրականում չի փոխվել»,- ասել է Չխաիձեն:

Հիշեցնենք՝ Վրաստանի երրորդ նախագահը բանտում է գտնվում 2021 թվականի հոկտեմբերի 1-ից: Դատարանը նրան ազատազրկման է դատապարտել պատգամավոր Վալերի Գելաշվիլիին ծեծի ենթարկելու եւ Սանդրո Գիրգվլիանիի մահվան գործով դատապարտվածներին նեռում շնորհելու համար: Այս երկուսից բացի, եւս երեք գործ է հարուցվել Սաակաշվիլիի նկատմամբ:

Ձերբակալման առաջին օրը Սաակաշվիլին հացադուլ էր հայտարարել, որը դադարեցրել է Գորիի կլինիկա տեղափոխվելուց հետո: Հարազատների ու փաստաբանների խոսքով՝ Սաակաշվիլին Վրաստանում պատշաճ բուժում չի ստանում:

Թբիլիսիի քաղաքային դատարանը երկամսյա վերանայումից հետո՝ փետրվարի 6-ին, մերժել է փաստաբանների միջնորդությունը, Սաակաշվիլիի առողջական վիճակը հաշվի առնելով, ազատել նրան կամ հետաձգել պատիժը՝ արտերկրում բուժում ստանալու հնարավորություն ընձեռելով:

ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում քննություն է իրականացվում՝ բացահայտելու ապրիլի 30-ին Երեւան քաղաքի Մյասնիկյան փողոցում կատարված սպանությունը: 2023 թվականի ապրիլի 30-ին՝ ուշ երեկոյան, քաղաքացուց ահազանգ է ստացվել, որ Երեւան քաղաքի Մյասնիկյան պողոտայի շենքերից մեկի մուտքի դիմաց արնահոսող, անգիտակից վիճակում, գետնին ընկած տղամարդ կա, որը չի շնչում: Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում 2023թ. մայիսի 1-ին, ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին եւ 335-րդ հոդվածի 1-ին մասերով, նախաձեռնվել է քրեական վարույթ: Նշված շենքի շքամուտքի մոտ հայտնաբերվել է արական սեռի, գլխի շրջանում առերեւույթ հրազենային վնասվածքով տղամարդու դիակ: Պարզվել է վերջինիս ինքնությունը. նա հանդիսանում է նույն շենքի բնակիչ, ըստ նախնական տվյալների՝ Հոլանդիայի քաղաքացի է:

Դեպքի վայրի զննությամբ հայտնաբերվել է երկու հատ պարկուճ, շքամուտքի դռան վրայից առերեւույթ հրազենային զենքից կրակված գնդակի բեկոր, ինչպես նաեւ քննությանը հետաքրքրող այլ առարկաներ: Հարցաքննվել են բազմաթիվ վկաներ: Դեպքի առթիվ առաջ են քաշվել մի շարք վարկածներ, որոնց շուրջ իրականացվում են լայնածավալ օպերատիվ-հետախուզական, վարութային եւ քննչական գործողություններ: Նշանակվել են դիակի դատաբժշկական, դատաձգաբանական եւ դատահետքաբանական համալիր փորձաքննություններ: Նախաքննությունը շարունակվում է: Ձեռնարկվում են անհետաձգելի բոլոր միջոցները՝ դեպքի հանգամանքները, հանցագործություն կատարած անձին կամ անձանց ինքնությունը պարզելու եւ հայտնաբերելու ուղղությամբ:

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՐԾԸՆԹԱՑ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ռազմիկ Շահնազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, նախնական համաձայնության գալով Լեւոն Շիրինյանի, Գարեգին Քամալյանի եւ Նարեկ Քամալյանի հետ, ըստ նախապես կատարված դերերի բաշխման, շահադիտական նպատակով, կեղծ փաստաթղթեր ներկայացնելով, կազմակերպել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ Արամ Ղազարյանի, Ժիրայր Պողոսյանի, Ջավեն Սարգսյանի, Վաչե Սարգսյանի, Ռազմիկ Մարտիրոսյանի, Արթուր Դեմիրչյանի, Կարեն Կզլյանի, Դավիթ Մանուկյանի, Էմմա Ղուկասյանի եւ Նարեկ Ջուլյանի անօրինական միգրացիան, բացի այդ, նախնական համաձայնության գալով Լեւոն Շիրինյանի եւ Խաչիկ Թորոսյանի հետ, շահադիտական նպատակով, ըստ նախապես կատարված դերերի բաշխման, կեղծ փաստաթղթեր ներկայացնելով, կազմակերպել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ Արթուր Բատոյանի, Ռոմիկ Սարգսյանի, Էդգար Խաչատրյանի, Բաղդասար Գորոյանի, Էդվին Ասլանյանի եւ Տիգրանի Գրիգորյանի անօրինական միգրացիան:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ապրիլի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում հայտնաբերվել են 1 անհետ կորած եւ 2 հետախուզվող: Կամավոր ներկայացել է 1 հետախուզվող:*

ԼՈՒՐԵՐ

ԲԱԺՆԵՏՈՄՄԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

ԱՄՆ-ի խոշորագույն բանկերից մեկի՝ First Republic-ի շուկայական արժեքը նվազել է մինչեւ 557 մլն դոլար՝ 2021 թվականի նոյեմբերին 40 մլրդ դոլար պիկի համեմատ:

Ինչպես հաղորդում է Reuters-ը, բանկի բաժնետոմսերը նվազել են գրեթե 50%-ով: Նկատվում է ավանդների ռեկորդային արտահոսք՝ շուրջ 100 մլրդ դոլարի չափով, որի ֆոնին կարգավորիչները փորձում են շտապ գտնել նոր սեփականատեր բանկի համար:

Ինչպես ասվում է նյութում, ամերիկյան կարգավորիչները փորձում են հրատապ գործարք կնքել First Republic Bank-ի վաճառքի վերաբերյալ, որը կարող է կլանել JPMorgan Chase Bank-ը:

Աճուրդին մասնակցելու հայտ են ներկայացրել մոտ վեց բանկեր, այդ թվում՝ Citizens Financial Group-ը, PNC Financial Services Group-ը եւ JPMorgan Chase-ը:

Նշվում է, որ վարկատուները կմասնակցեն First Republic Bank-ի բոլոր ավանդների, նրա ակտիվների զգալի մասի եւ որոշ պարտավորությունների աճուրդին:

First Republic-ը ԱՄՆ-ի քսան խոշորագույն բանկերի շարքում էր: Ապրիլի 13-ի դրությամբ Սան Ֆրանցիսկոյում տեղակայված բանկի ընդհանուր ակտիվները կազմել են 229 մլրդ դոլար, ավանդները՝ 104 մլրդ դոլար:

ՌԵԿՈՐԴԸ ԿԱՐՈՂ Է ԳԵՐԱԶԱՆՑՎԵԼ

Ակնկալվում է, որ հանգուցյալ ավստրիացի միլիարդատեր Հայդի Հորթոնի ոսկերչական հավաքածուի աճուրդը գերազանցելու է հանգուցյալ դերասանուհի Էլիզաբեթ Թեյլորի կողմից ավելի քան մեկ տասնամյակ առաջ սահմանած ռեկորդը:

2011 թվականին Թեյլորի զարդերն աճուրդում վաճառվել են գրեթե 116 միլիոն դոլարով, իսկ նրա երկրպագու Քիմ Քարդաշյանը 64900 դոլար է ծախսել Lorraine Schwartz-ի երեք ապարանջանների համար:

Այնուամենայնիվ, Հորտոյին պատկանող ավելի քան 700 զարդեր ընդհանուր առմամբ գնահատվում են ավելի քան 150 միլիոն դոլար՝ Ժնեւի Four Seasons Hotel des Bergues հյուրանոցում եւ մայիսին ու նոյեմբերին առցանց աճուրդների շարքում:

Christie's աճուրդի տունը հայտարարել է, որ երբեւէ աճուրդի դրված ոսկերչական իրերի «ամենամեծ ու ամենաթանկ» հավաքածուն «գերաճ» կտա 2011 թվականի Էլիզաբեթ Թեյլորի հավաքածուին եւ 2019 թվականի Maharajas & Mughal Magnificence աճուրդներին:

Զարդերը ներառում են Հարրի Ուինսթոնի 90 կարատանոց Briolette of India ադամանդե վզնոցը, Cartier մատանին սուտակով եւ աղավնիի արյունով ադամանդներով, ժամանակակից եւ վաղեմի Bulgari ստեղծագործությունների շարք ու այլ շքեղ ապրանքանիշեր, ինչպիսիք են Tiffany-ը եւ Van Cleef & Arpels-ը:

ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ԵՆ

ՆԵՐՈՂՈՒԹՅՈՒՆ Է ԽՆԴՐԵԼ

Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանի կինը՝ Մարիամ Պահլավունին, ներողություն է խնդրել բժիշկ-ուրոլոգ Գեւորգ Գրիգորյանից ոչ կոռեկտ «բառամթերքի» համար: «Փաստինֆո»-ն գրում է, որ ներողություն խնդրելուն Պահլավունուն դատարանը՝ արձանագրելով, որ նա վիրավորել է Գրիգորյանին:

Դեռեւս 2020թ. մարտին ուրոլոգ Գեւորգ Գրիգորյանը ֆեյսբուքյան իր էջում գրառում էր կատարել՝ հայտնելով, որ եթե Ավինյանը համապատասխան քայլեր չանի կնոջ ասածի համար, ապա հարցը կլուծվի իրավական ճանապարհով:

«Հարգելի՛ պարոն Ավինյան, Դուք չեք կարողացել զսպել Ձեր կնոջ ճառերը, եւ արդյունքում Ձեր կինը հանդես է եկել ոչ հարիր բառամթերքով սոցիալական ցանցում՝ հասցեագրված օտար տղամարդու, ինչը լայն տարածում է ստացել լրատվական դաշտում: Ակնկալում եմ Ձեր կողմից տղամարդուն վայել կեցվածք, պատասխանատվություն՝ սեփական կնոջ բառամթերքի համար»,- գրել էր Գրիգորյանը, սակայն արձագանք չստանալով՝ ապրիլի 4-ին դիմել էր դատարան՝ պահանջելով դատական կարգով պարտավորեցնել Պահլավունուն՝ներողություն խնդրել, հերքել հրապարակայնորեն արտահայտված՝ պատիվը եւ արժանապատվությունը վիրավորող արտահայտությունները, ինչպես նաեւ 1 մլն դրամ բռնագանձել՝ որպես փոխհատուցում:

Խնդրո առարկա հայտարարությունը, որը, հայցվորի դիտարկմամբ, վիրավորանք էր պարունակում, եղել է «Առանց դրա էլ բոլորը շատ լավ գիտեն՝ ում շունն ես» արտահայտությունը:

Գործի քննության ընթացքում առաջին ատյանի դատարանը հայցի ապահովման միջոց է կիրառել՝ հայցապահանջի՝ 1 մլն դրամի չափով արգելանք դնելով Պահլավունու գույքի նկատմամբ: Երեւանի ընդհանուր իրավասության դատարանը՝ դատավոր Սիմիզար Հովսեփյանի նախագահությամբ, 2022թ. հոկտեմբերի 11-ին մերժել էր հայցադիմումը՝ վճռելով հօգուտ Պիլավունու բռնագանձել 200.000 դրամ՝ որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար: Հայցվոր կողմը բողոքարկել է վճիռը՝ պահանջելով բեկանել այն եւ բավարարել հայցը՝ընդդեմ Պահլավունու: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը՝ դատավոր Հարություն Ենոքյանի նախագահությամբ, կազմով դատավորներ Նարեկ Գաբրիելյանի, Կարեն Համբարձումյանի, մասնակի բավարարել է բողոքը՝ բեկանելով Սիմիզար Հովսեփյանի վճիռը:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանը պարտավորեցրել է Տիգրան Ավինյանի կնոջը ներողություն խնդրել բժշկից, ինչպես նաեւ բռնագանձել 100.000 դրամ՝ որպես փոխհատուցում Գրիգորյանին պատճառված վնասի համար: Դատավոր Կարեն Համբարձումյանը հատուկ կարծիք է ներկայացրել՝ իր անհամաձայնությունը հայտնելով վճռի պատճառաբանական եւ եզրափակիչ մասերով վիրավորանքի դիմաց որոշված 100.000 դրամի չափով փոխհատուցման հետ, եւ գտնում է, որ փոխհատուցման չափը պետք է սահմանվեր 200.000 դրամի չափով, ինչպես եւ առաջարկվել էր որոշման նախագծով:

Վճիռը մտել է օրինական ուժի մեջ, ինչի հիման վրա՝ Մարիամ Պահլավունին ֆեյսբուքյան իր էջում հրապարակավ ներողություն է խնդրել բժիշկ-ուրոլոգ Գեւորգ Գրիգորյանից:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԴԱՏԱՐԱՆ

Հայաստանը նոր վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան կունենա: Այս դատարանի ստեղծման վերաբերյալ նորմերն ուժի մեջ են մտնելու 2024 թվականի հունվարի 1-ից: Համապատասխան նախագիծն արդեն ուղարկվել է խորհրդարանին:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանը իրականացնելու է հակակոռուպցիոն քաղաքացիական եւ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով կայացված դատական ակտերի վերաքննության կարգով վերանայումը: Այդ դատարանը կազմված է լինելու թվով առնվազն 12 դատավորներից, որոնցից առնվազն 6-ն իրականացնելու են կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով, եւ առնվազն 6-ը՝ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի դեմ բողոքների քննություն:

Հիմնավորման մեջ նշվում է, որ նախագծերի նպատակն է ապահովել հակակոռուպցիոն քաղաքացիական եւ կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերով կայացված դատական ակտերի վերաքննության կազմակերպումը մասնագիտացված՝ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կողմից:

Այսպիսով, արդյունքում սույն թվականի հունիսի 15-ից վերաքննիչ քրեական եւ վերաքննիչ քաղաքացիական դատարանները դադարելու են քննել համապատասխանաբար կոռուպցիոն հանցագործությունների եւ հակակոռուպցիոն քաղաքացիական գործերով բողոքարկման ենթակա դատական ակտերը:

ԹՎԱՅԻՆ ՄԱՐԴՈՒ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Tencent Cloud ընկերությունը ներկայացրել է թվային մարդու արտադրության համար նախատեսված թվային հարթակ, որը կոչվում է Deepfakes-as-a-Service (DFaaS):

Մարդու թվային տարբերակը ստեղծելու համար ծառայությանն անհրաժեշտ է տվյալ մարդու մասնակցությամբ ընդամենը երեք րոպե տեւողությամբ տեսանյութ, նրա կողմից արտասանված 100 նախադասություն եւ 24 ժամ ժամանակ. այս ամենը արժե ընդամենը 145 դոլար:

Մարդու թվային տարբերակը հասանելի է ինչպես ամբողջ հասակով, այնպես էլ մինչեւ գոտկատեղը տարբերակով: Ծառայությունը հասանելի է թե՛ չինարեն, թե՛ անգլերեն լեզուներով:

Tencent Cloud Intelligent Digital Human Products-ի գլխավոր մենեջեր Չեն Լեյն ասել է, որ ընկերությունը հույս ունի կառուցել «խելացի թվային մարդու ստեղծման ավտոմատացված ֆաբրիկա»:

Tencent-ն իր թվային մարդկանց համար առաջարկում է հինգ ոճ՝ երեք 3D (իրական, կիսաիրական եւ անիմացիոն) եւ երկու 2D (իրական եւ անիմացիոն):

Թվային մարդկանց կարելի է օգտագործել, օրինակ, չատբոտերի հետ աշխատանքում, որոնք գնալով շատ տարածված են դառնում: Տեղական լրատվամիջոցները նաեւ հայտնում են, որ Tencent-ը կարող է օգտագործել այս մշակումը թվային բժիշկների, իրավաբանների եւ այլ մասնագետների ստեղծման համար:

● *Ապրիլի 27-ից 28-ը Հայաստանի Հանրապետությունում նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է անձնական ունեցվածքի գողության եւ բնակարանային գողության 1-ական դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻ

«Այս պահին կենդանաբանական այգում ունենք 145-ից ավելի տեսակներ՝ 720-ից ավելի առանձնյակով: Տարվա ընթացքում պայմանավորվածություններ ենք ձեռք բերել նոր կենդանիներով համալրելու՝ փոխանակումների ձեւով, առանց լրացուցիչ ֆինանսական ներդրումների անհրաժեշտության»,- մայիսի 1-ին լրագրողների հետ զրույցում նշեց կենդանաբանական այգու տնօրենի պաշտոնակատար Աշոտ Ասլանյանը:

«Ընդհանրապես, եվրոպական կենդանաբանական այգիներում արգելվում է կենդանիների առքուվաճառքը, փոխարենը կա կենդանիների փոխանակման պրակտիկա: Օրինակ՝ մտադիր ենք բերել սպիտակապոչ գնու, աֆրիկյան 1-2 անտիլոպներ, բորենիանման շներ»,- ասաց նա:

Հարցին, թե վերջին շրջանում ինչ կենդանատեսակների անկման դեպքեր են եղել, տնօրենի պաշտոնակատարը պատասխանեց. «Կենդանիների անկումը բնական պրոցես է բոլոր կենդանաբանական այգիների համար: կենդանաբանական այգիների համար. մոտավորապես 10 տոկոս անկումը համարվում է նորմայի սահմաններում, քանի որ կենդանիները ծերանում են, հիվանդանում են, որոնց հնարավոր չէ բուժել: Նաեւ արուների միջեւ մրցակցության արդյունքում եւս վնասվածքներից կենդանիները կարող են մահանալ:

Անցած տարի մեզ մոտ անկումները 7 տոկոսի էլ չեն հասել: Շատ ուրախ ենք, որ այս տեսակետից բավականին նորմալ մակարդակի վրա ենք»:

Ինչ վերաբերում է 4-5 անգդերի անկմանը, նա միայն ասաց, որ դա եղել է 2022-ի սկզբին՝ մինչեւ իր՝ կենդանաբանական այգի տեղափոխվելը:

ԹԻԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱԼԻԵՎԻՆ

Ադրբեջանի իշխանությունները պատրաստվում են արցախյան օկուպացված Մատաղիսում թիավարություն կազմակերպել՝նվիրված Հեյդար Ալիեւի 100-ամյակին:

Թիավարության մրցումը տեղի կունենա Մատաղիսում (ադրբեջաներեն անվանումը՝ Սուղովուշան) եւ Մինգյաչեւիրում: Կմասնակցեն ակադեմիական թիավարության, բայդարկաներով թիավարության եւ կանոեով թիավարության ավելի քան 100 ադրբեջանցի եւ օտարերկրացի մարզիկներ 20 երկրներից: Թիավարության փակման արարողությունը տեղի կունենա մայիսի 7-ին Բաքվում:

Ինչպես նշել են ադրբեջանական ԶԼՄ-ները, այս տարի թիավարությունն առաջին անգամ ներառվել է Կանոեի եվրոպական ասոցիացիայի օրացուցային պլանում:

Ավելի վաղ Հայաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը դիմել էր Բաքվում «Ֆորմուլա-1» գրան պրիի կազմակերպիչներին՝ Ադրբեջանի իշխանությունների հանցավոր քաղաքականության մասնակիցը չդառնալու կոչով: Կոչն անտեսվել է: Այժմ Կանոեի եվրոպական ասոցիացիան էլ է միացել Ադրբեջանի իշխանությունների ցեղասպանածին քաղաքականությունը թաքցնելու փորձերին:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԺԱՄԱՅԻՆ ԵՎ ՍԱԿԱԳՆԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2023 թվականի մայիսի 1-ից Հայաստանի պատմության թանգարանում կլինեն ժամային եւ սակագնային փոփոխություններ. այս մասին տեղեկացնում է թանգարանը:

Ժամային նոր գրաֆիկը հետեւյալ տեսքն ունի՝

երեքշաբթի-կիրակի՝ 10:00-18:00,

ուրբաթ՝ 10:00-19:00 (թանգարանը նշված ժամանակացույցով կգործի մայիսի 1-ից մինչեւ հոկտեմբերի 1-ը):

Հրապարակվել են նաեւ տոմսերի արժեքները՝

-Մշտական ցուցադրության այցելության տոմս՝ 2500 ՀՀ դրամ,

-Մշտական ցուցադրության բացատրության տոմսեր՝ հայերենով՝ 4000 ՀՀ դրամ,

-օտար լեզուներով՝ 5000 ՀՀ դրամ,

-կրթական ծրագրեր՝ 2000 ՀՀ դրամ:

Այցելության տոմսի գինը 50 տոկոսով կզեղչվի՝

-12 տարեկանից բարձր դպրոցականների,

-ուսանողների,

-Հայաստանի եւ Արցախի տարածքներում մարտական գործողությունների ժամանակ ծառայողական պարտականությունները կատարելիս զոհված զինծառայողների ընտանիքների անդամների,

-ՀՀ քաղաքացի հանդիսացող կենսաթոշակառուների եւ փախստականների համար:

Մշտական ցուցադրության անվճար այցելության արտոնություն է սահմանվում՝

-մինչեւ 12 տարեկան երեխաների,

-Հայաստան ժամանած պետական պաշտոնական պատվիրակությունների անդամների,

-Հայաստանում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցիչների,

-Թանգարանների միջազգային խորհրդի անդամների /ԻԿՕՄ/,

-թանգարանային աշխատողների,

-երկկողմանի ծնողազուրկ 12 տարեկանից բարձր տարիքի երեխաների,

-հատուկ խնամքի եւ կենցաղային սպասարկման կարիք ունեցող ծերերի,

-Երկրորդ համաշխարհային պատերազմի մասնակիցների /ՀՀ եւ նախկին ԽՍՀՄ պետությունների հաշմանդամություն ունեցող 1-ին խմբի/ուղեկցող անձի հետ/,

-հաշմանդամություն ունեցող՝ 2-րդ եւ 3-րդ խմբերի /առանց ուղեկցողի/,

-աղքատության /ընտանեկան/ նպաստի համակարգում ընդգրկված նպաստառուների,

-բազմազավակ ընտանիքների 12 տարեկանից բարձր երեխաների,

-ժամկետային զինծառայողների,

-ՀՀ սահմանամերձ շրջանների 12 տարեկանից բարձր դպրոցական տարիքի երեխաների /նախօրոք ներկայացված հայտերի հիման վրա/, լրագրողների՝ աշխատանքային բոլոր օրերին / անձը եւ կարգավիճակը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում/ համար:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթ օրը մուտքը կլինի ազատ:

Փոփոխությունների համար հիմք է ընդունվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության հրամանը:

ՀՈՒՆԱՍՏԱՆ

ՄԱՅԻՍԻ 1-Ը ՆՇՎԵԼ Է ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՑՈՒՅՑԵՐՈՎ

Աշխատանքի օրը՝ Մայիսի 1-ը, Հունաստանում նշում են զանգվածային գործադուլներով եւ ցույցերով, մասնակցում են արհմիությունները:

Բոլոր նավերը Մայիսի 1-ին կմնան նավահանգիստներում նավագնացային ընկերությունների արհմիությունների 24-ժամյա գործադուլի պատճառով: Տրանսպորտային ընկերությունների աշխատակիցները որոշել են մի քանի ժամ դադարեցնել աշխատանքը. Աթենքում ավտոբուսները եւ տրոլեյբուսները չեն աշխատի հերթափոխի ընթացքում՝ առավոտ ժամը 09.00-ից մինչեւ 21.00-ն: Աթենքի մետրոն եւ տրամվայը չեն աշխատի ամբողջ օրը, չեն աշխատի նաեւ մերձքաղաքային գնացքները: Սալոնիկն ամբողջ օրը կմնա առանց քաղաքային ավտոբուսների 24-ժամյա գործադուլի պատճառով:

Աթենքում տեղի կունենան խոշոր արհմիությունների ցույցեր:

«Համահունական մարտական ճակատ» (ΠΑΜΕ) կոմունիստական արհմիությունը ցույց կանցկացնի խորհրդարանի մոտ՝ Սինտագմա հրապարակում:

Հունաստանի Աշխատանքի համընդհանուր կոնֆեդերացիան (GSEE), Պետական ծառայողների արհմիության ADEDY բարձրագույն խորհուրդը եւ Աթենքի աշխատանքի EKA կենտրոնը հանրահավաք կանցկացնեն Կլատմոնոս հրապարակում՝ կոմունիստներից մի քանի հարյուր մետր հեռու:

«Աշխատանքի օրը նշանային օր է աշխատանքային շարժման համար, այն նշանավորում է դասակարգային պայքարի, նեխած եւ բարբարոսական կապիտալիստական համակարգի տապալման ուղին, դեպի նոր հասարակություն՝ սոցիալիզմ-կոմունիզմ տանող ուղին»,- նշվել է Հունաստանի Կոմկուսի՝ տոնի առիթով տարածած հայտարարությունում:

Հույն կոմունիստների կարծիքով՝ վերջերս տեղի ունեցած ժողովրդական զանգվածային ելույթները եվրոպական շատ երկրներում ցույց են տալիս միակ ուղին, որը կարող է հանգեցնել մարդու կողմից մարդու շահագործման վերացմանը: «Դրանք ցույց են տալիս, որ վարձու ստրկությունից բանվոր դասակարգի ազատագրման պայքարը կապիտալիզմի շղթաներից մարդկության ազատագրման ուղին է»,- նշվել է հայտարարությունում:

Հունաստանի Կոմկուսը զգուշացնում է, որ բուրժուական ցանկացած կառավարություն, որը կձեւավորվի մայիսի 21-ի ընտրություններից հետո, օբյեկտիվորեն կնպաստի հակաժողովրդական քաղաքականության սրմանը Հունաստանում, եւ կոչ է անում քվեարկել կոմունիստների օգտին:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԱՐՄՄՈՆՈ» 21-ՐԴ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆԸ

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ Հայաստանում մեկնարկում է «Արմմոնո» 21-րդ հոբելյանական միջազգային թատերական փառատոնը: Այս տարի փառատոնի մասնակից երկրներն են Ռուսաստանը, Ղազախստանը, Բելառուսը, Վրաստանը. կցուցադրվի 20 մոնոներկայացում, որից 7-ը՝ միջազգային ծրագրում: Միջազգային ծրագրում հանդես կգան Անտոն Մոզգալյովը՝ «Դահիճը» (ՌԴ), Յուլիա Կուդրյաշովան՝ «Այն մեկին ո՞վ գիտի» (Ղազախստան), Նազգյուլ Կարաբալինան՝ «Մոնո» (Ղազախստան), Դմիտրի Նիկոլայենկոն՝ «Հեզը» (ՌԴ), Ալեքսեյ Կուլակովը՝ «Լուսնի քաղաքացին» (Բելառուս), Իրինա Մեղվինետուխուցեսին՝ «Ագնեսը. Ուիլլի կինը» (Վրաստան) մոնոներկայացումներով: Տեղական ծրագրում հանդես կգան Վարսենիկ Ավանյանը՝ «Սպասում», Լիլիա Մուկուչյանը՝ «Վարեչկա», Մարիամ Մանոն՝ «Աղրեբլ», Արմեն Քուշքյանը՝ «Համլետի երազները» մոնոներկայացումներով:

«Համլետի երազները» մոնոներկայացումը նվիրված է ՀՀ ժողովրդական արտիստ Վահե Շահվերդյանի հիշատակին. այն բեմադրիչի վերջին աշխատանքն է: Լրագրողների հետ զրույցում «Արմմոնո» միջազգային թատերական փառատոնի տնօրեն Մարիաննա Մխիթարյանը նշեց, որ այս տարվա ծրագիրը բավականին հագեցած է: Առանցքում հայ երիտասարդ բեմադրիչներն են, դերասանները, դրամատուրգները:

«Փառատոնի համար դա առանցքային է: Խնդիր է դրված մեր հանդիսատեսի համար ճանաչելի դարձնել մեր դերասաններին, բեմադրիչներին: Մեր երկրի համար դժվար պահերին անհրաժեշտ է, որ հանդիսատեսն ավելի լավ ճանաչի ու գնահատի մեր ստեղծագործողներին»,- ասաց Մարիաննա Մխիթարյանը: Փառատոնի շրջանակներում ներկայացումների ցուցադրությունը չի սահմանափակվելու մայրաքաղաքով: Ինչպես նախորդ տարիներին, այս տարի եւս Հայաստանի մյուս քաղաքների թատերասերները մասնակցելու հնարավորություն կունենան: Ներկայացումներ ցուցադրվելու են նաեւ Գյումրիում եւ Աբովյանում: Փառատոնի ծրագրում ներառված են բազմատեսակ մոնոներկայացումներ՝ մոնոօպերա, մոնոդրամա, մոնոդոկ: Մոնոներկայացումները կցուցադրվեն «Արմմոնո-Տրիումֆ», «Արմմոնո-Օպերա», «Արմմոնո-Դեբյուտ» խորագրերի շրջանակում: «Մենք համագործակցում ենք tatron-drama.am կայքի հետ եւ այդ համագործակցության շրջանակում նախատեսում ենք անցկացնել նաեւ հատուկ նախագիծ՝ թատերական ընթերցումներ՝ «Բաժանություն հայկական ձեւով» խորագրի ներքո, որտեղ կներկայացվեն հայ դրամատուրգների գործեր: Բեմադրիչը Տաթեւ Ղազարյանն է»,- ասաց Մարիաննա Մխիթարյանը:

Համագործակցության նոր հնարավորություն է բացվում Լեհաստանի գործընկերների հետ: Փառատոնի շրջանակում Հայաստանում է «Կեսգիշերային նետը» դեբյուտային մոնոներկայացումների թատերական փառատոնի տնօրեն Մարեկ Կոլովսկին Լեհաստանից:

Նա վարպետության դաս է անցկացնելու տեղի երիտասարդ մասնագետների հետ: «Մեծ ուրախությամբ եմ մասնակցում «Արմմոնո» փառատոնին:

Իմ ցանկությունն է, որ Լեհաստանի դեբյուտային երիտասարդ դերասանները կարողանան իրենց մասնակցությունն ունենալ փառատոնին:

Ամեն ջանք գործադրելու եմ, որ գան այստեղ բեմադրեն լեհական ներկայացումներ: Սա իմ առաջին համագործակցությունն է լինելու «Արմմոնո» փառատոնի հետ»,- ասաց Մարեկ Կոլովսկին:

Փառատոնի օրերին Երեւան կժամանեն միջազգային հեղինակավոր փառատոնների տնօրեններ, փորձագետներ, որոնք կանցկացնեն վարպետության դասեր: Փառատոնն անցկացվելու է մինչեւ մայիսի 17-ը:

ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»-Ի ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Երեւանի «Ոսկե ծիրան» հոբելյանական 20-րդ միջազգային կինոփառատոնն այս տարի տեղի կունենա հուլիսի 9-16-ը. այս մասին ArmLur.am-ին հայտնեցին «Ոսկե ծիրան» Երեւանի միջազգային կինոփառատոնի մամուլի գրասենյակից:

Այս տարի եւս միջազգային կինոտոնը հանրությանը կներկայացնի մրցութային կինոնկարներ աշխարհի տարբեր երկրներից, ինչպես նաեւ ֆիլմեր ամենահեղինակավոր (Կաննի, Բեռլինի եւ այլն) կինոփառատոններից: Հայաստան կժամանեն կինոյի համաշխարհային դեմքեր, որոնք իրենց փորձն ու արվեստը կներկայացնեն կինոսերներին: «Ոսկե ծիրան»-ը այս տարի նշում է ստեղծման 20-րդ հոբելյանը: Բացի այդ, այս տարի նշվում է հայ կինոյի 100-ամյակը, եւ փառատոնն առանձնահատուկ անդրադարձ կունենա այդ երկու հոբելյաններին: Փառատոնի վերաբերյալ այլ մանրամասներ հանրությանը կներկայացվեն ավելի ուշ:

ԼՈՒՐԵՐ

ՄԵՐԿ ԼՈՒՍԱՆԿԱՐ՝ ԱՄՍԱԳՐԻ ՀԱՄԱՐ

Հայտնի մոդել Վինի Հարլոուն ամբողջովին մերկ լուսանկարվել է Womens' Health ամսագրի համար՝ լինելով վիտիլիգոյով առաջին աշխարհահռչակ մոդելը: Այն աուտոիմուն հիվանդություն է, որն առաջացնում է պիգմենտացված մաշկի բծեր: Վիննին ոչ միայն առաջին գծի զինվորն է գեղեցկության համար պայքարում, այլեւ անթիվ կանանց եւ աղջիկների հերոսը, որոնք երբեւէ անհարմար են զգացել իրենց արտաքինից:

Վիննին, ով Instagram-ում ունի ավելի քան 10 միլիոն հետեւորդ, պնդում է, որ ցանկություն չունի լինել օրինակելի (նա նախընտրում է «ներշնչանքը»): Այնուամենայնիվ, նրա իմիջը զարդարող ամսագրի շապիկների եւ գովազդային վահանակների ազդեցությունը, ինչպես նաեւ նրա աշխատանքը անթիվ գովազդային արշավներում, այդ թվում՝ Fendi-ի, Puma-ի եւ M.A.C-ի համար, անհերքելի է:

Մի անգամ մի երկրպագու Վինիի հետ կիսվել է իր մոր մասին պատմությամբ, որն իր ամբողջ կյանքն անցկացրել է վիտիլիգոյի պատճառով ձեռքերը ծածկելով. «Իմ ամբողջ կյանքում մայրս երբեք իրեն գեղեցիկ չի զգացել, հետո ես ցույց տվեցի նրան քո նկարը, իսկ հիմա նա կարճ թեւ է հագնում»: «Հիանալի է, որ ես կարող եմ օգնել մարդկանց վստահություն սերմանել՝ անկախ նրանից, թե որ ոլորտում են նրանք»,- ասել է մոդելը:

«ԴԵՎԻԴ ԲՈՈՒԻԻ ԿԻՆ»

67-ամյա սուպերմոդել Իմանը շարունակում է ապացուցել, որ ժամանակն ու բնությունը իշխանություն չունեն իր վրա: Նա հայտնվել է Նյու Յորքում The Prince's Trust Global Gala-ին եւ պուտավոր զգեստով հիանալի տեսք է ունեցել:

Իմանը որոշել է նվազագույնի հասցնել իր դիմահարդարումը:

Անցյալ տարի Իմանը պատմել է իր վշտի՝ ամուսնու՝ Դեւիդ Բոուիի մահվան մասին:

Նա ասել է, որ հրաժարվել է նրան «մահացած» անվանել: «Նա իմ հանգուցյալ ամուսինը չէ: Նա իմ ամուսինն է: Ես ընդհանրապես դեմ չեմ, որ ինձ անվանեն «Դեւիդ Բոուիի կին»: Բայց ես միշտ հիշեցնում եմ մարդկանց, որ ես եղել եմ նախքան նրան հանդիպելը: Եվ նա նույնպես շատ յուրահատուկ էր: Նա ինձ երբեք չի ներկայացրել՝ ասելով՝ ծանոթացե՛ք կնոջս հետ: Նա միշտ ասում էր. «Ծանոթացե՛ք, Իմանն է՝ կինս»: Մենք միասին էինք, բայց անհատներ էինք», - ավելացրել է նա:

● *Մայիսի 3-ին Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա «Նիկոս Վերտիս» համերգը: Տոմսերի արժեքը՝ 10000-50000 դրամ: Սկիզբը՝ ժամը 20:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ, թե ինչով են պայմանավորված ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները:

Հայարփի Ջիլավյան (45 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում ազգային արժույթի փոխարժեքը ձեւավորվում է արժութային շուկայում առկա առաջարկի ու պահանջարկի եւ դրանց փոփոխությունների ազդեցության ներքո: Եթե արտահանման աճի կամ կապիտալի ներհոսքի հետեւանքով տվյալ ազգային արժույթի շուկայում ավելանում է արտարժույթի առաջարկը, ազգային արժույթի դիրքերն անհրաժեշտաբար ամրապնդվում են: Համապատասխանաբար, ներմուծման աճը կամ կապիտալի արտահոսքը նպաստում են ազգային արժույթի դիրքերի թուլացմանը:

Փոխարժեքի փոփոխությունը կարող է լինել բավականին տեւական, երբ այն պայմանավորված է երկարաժամկետ բնույթի գործոններով, կարող է կրել սեզոնային բնույթ (երբ, օրինակ, ներմուծման ու արտահանման սեզոնները տարբեր են) եւ կարող է լինել կարճաժամկետ, երբ այն կարճաժամկետ գործոնների (օրինակ՝ կարճաժամկետ ֆինանսական ներհոսքի կամ արտահոսքի) ազդեցության արդյունք է:

ՀՀ կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Արժութային շուկայում առկա առաջարկն ու պահանջարկը կարող են փոփոխվել նաեւ մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո, որոնցից են, մասնավորապես, կառավարության ծախսերը, Կենտրոնական բանկի ինտերվենցիաները, արժութային կարգավորման ոլորտում օրենսդրական փոփոխությունները, էներգակիրների գների տատանումները, բնակչության մոտ ձեւավորվող սպասումները:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ կազմակերպության լուծարման դեպքում ի՞նչ ժամկետում պետք է ներկայացնել հաշվետվությունները:

Սիրան Հայրապետյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ս. Հայրապետյանի հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.1 հոդվածի համաձայն՝ հարկ վճարողի լուծարման դեպքում մինչեւ հաշվետու ժամանակաշրջանների ավարտը հարկային մարմին ներկայացված միջանկյալ եւ (կամ) լուծարային հաշվարկները (հայտարարագրերը, հաշվետվությունները, հաշվեկշիռները) համարվում են հաշվետու ժամանակաշրջանների համար ներկայացված հաշվարկներ (հայտարարագրեր, հաշվետվություններ, հաշվեկշիռներ), եթե այդ հաշվարկները (հայտարարագրերը, հաշվետվությունները, հաշվեկշիռները) ներկայացնելուց հետո՝ մինչեւ հաշվետու ժամանակաշրջանների ավարտը, հարկ վճարողը որեւէ գործարք կամ գործառնություն չի կատարել, որոնց հիման վրա առաջացած պարտավորությունների վճարման օր է համարվում դրանց ներկայացմանը հաջորդող տասներորդ աշխատանքային օրը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լրանալուց հետո: Նույն օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ հարկային օրենսդրությունը բաղկացած է «Հարկերի մասին» օրենքից եւ առանձին հարկատեսակների մասին օրենքներից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

ՖԻԴԵ-ն հրապարակել է շախմատի համաշխարհային վարկանիշի թարմացված աղյուսակը:

Աշխարհի լավագույն շախմատիստների 100-յակում տեղ են գտել հայ 3 շախմատիստ: Գաբրիել Սարգսյանը զբաղեցնում է 42-րդ տեղը՝ 2692 միավորով, Հայկ Մարտիրոսյանը՝ 61-րդ տեղը՝ 2675 միավորով, իսկ Հրանտ Մելքումյանը 2650 միավորով՝ 92-րդ տեղում է:

ԱՄՆ դրոշի ներքո հանդես եկող Լեւոն Արոնյանը վարկանիշում 2745 միավորով զբաղեցրել է 11-րդ տեղը:

Աշխարհի լավագույն շախմատիստների 100-յակը շարունակում է գլխավորել նորվեգացի գրոսմայստեր, աշխարհի նախկին չեմպիոն Մագնուս Կարլսենը (2853 միավոր):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Մարզ	Ջերմաստիճան
Շիրակ	+ 3 + 8 +12 + 16
Կոտայքի լեռներ	+ 3 + 6 +12 + 14
Կոտայքի նախալեռներ	+ 8 + 10 +18 + 20
Գեղարքունիք	+ 2 + 6 +12 + 17
Լոռի	+ 4 + 8 +17 + 20
Տավուշ	+ 7 + 12 +20 + 24
Արագածոտնի լեռներ	+ 3 + 7 +12 + 14
Արագածոտնի նախալեռներ	+ 8 + 11 +18 + 22

Մարզ	Ջերմաստիճան
Արարատ	+ 9 + 12 +22 + 25
Արմավիր	+ 8 + 10 +22 + 24
Վայոց ձորի լեռներ	+ 3 + 6 +14 + 17
Վայոց ձորի նախալեռներ	+ 8 + 11 +18 + 22
Սյունիքի հովիտներ	+11 + 14 +25 + 30
Սյունիքի նախալեռներ	+ 4 + 8 +20 + 26
Արցախ	+11 + 15 +27 + 32
Երեւան	+ 9 + 11 +21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **1.5.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում

Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*